# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**08.02.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-20/2-1» ծածկագրով պետության կարիքների համար հաճախորդների սպասարկման սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

«26» փետրվարի 2021թ.

ք.Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «ՍԱԼՈՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Մուղումյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածով և 08.02.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-20/2-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայության 2021թ.-ին մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ Պայմանագրի N 3 հավելվածը սահմանել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 02.02.2021թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

## 2. Այլ պայմաններ

2.1. 08.02.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-20/2-1» ծածկագրով պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

________________________ Վ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՍԱԼՈՆ» ՍՊԸ
Զաքարիա Քանաքեռցու 1 նրբ./19տ.,
Քանաքեռ Զեյթուն 0052 Երևան Հայաստան
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2471201718520000
ՀՎՀՀ՝ 00889166
Տնօրեն՝

________________________ Ա. Մուղումյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված

08.02.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-20/2-1» ծածկագրով

պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով

« 26 » փետրվարի 2021թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79341210/502 | հաճախորդների սպասարկման ծառայություններ | | 3 661 630 | 3 661 630 | 8 238 670 | 8 238 670 | 8 238 670 | 12 815 710 | 12 815 710 | 12 815 710 | 18 308 160 | 18 308 160 | 18 308 160 | 18 308 160 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական-վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

_______________ Վ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՍԱԼՈՆ» ՍՊԸ
Զաքարիա Քանաքեռցու 1 նրբ./19տ.,
Քանաքեռ Զեյթուն 0052 Երևան Հայաստան
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2471201718520000
ՀՎՀՀ՝ 00889166
Տնօրեն՝

_______________ Ա. Մուղումյան
/ստորագրություն/ Կ.Տ